# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.05.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ԱՄ-2018/41**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.04.2018թ. թիվ 03/26-3/6312-18 գրությամբ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 29.03.2018թ. գրության հիման վրա, 06.04.2018թ. թիվ 03/26-3/6312-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ սույն թվականի մարտի 21-ին Ընկերությունը մասնակցել է ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգին և թիվ երկու չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից, սակայն մարտի 21-ի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ 31 500 ՀՀ դրամի չափով, որը առաջացել է մարտի 20-ին 2018թ. առաջին եռամսյակի շահութահարկի կանխավճարի (158 000 ՀՀ դրամ) հաշվեգրման արդյունքում, որը գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ապառքը 994 դրամի չափով, գերազանցել է սահմանված չափը:

Ընկերությունը հայտնել է, որ սույն թվականի մարտի 26-ին ՀՀ պետական բյուջե է փոխանցել 100 000 ՀՀ դրամ և արդեն իսկ բողոքարկման օրը 29.03.2018թ. դրությամբ Ընկերությունը ունեցել է 68 500 ՀՀ դրամ գերավճար:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ ունեցել է նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումար 673 132 ՀՀ դրամի չափով:

Վերոհիշյալ գրությանը կից Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել 2017թ. շահութահարկի հաշվարկի կրկնօրինակը և մարտի 26-ին օնլայն կատարված փոխանցումը հավաստող փաստաթղթերի կրկնօրինակները:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն մինչ օրս պետական գնումների գործընթացում որևէ խախտում չի ունեցել:

«Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 10.04.2018թ. ժամը 11:15-ին հավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը 05.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ սույն թվականի մարտի 26-ին «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի արդյունքում արձանագրվել է, որ Ընթացակարգի միակ մասնակից «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների չափը կազմում է 31 500 ՀՀ դրամ, որը գերազանցում է գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 10.04.2018թ. ժամը 11:15-ին հավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**4. <u>ՍՑ-ԱՄ-2018/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՍՑ-ԱՄ-2018/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 21.03.2018թ. հայտ է ներկայացրել «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 2 244 200 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 806 400 ՀՀ դրամ:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 21.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

5. ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 24.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 31 500 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 26.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշումով, Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարել է չկայացած :

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.04.2018թ. թիվ 03/26-3/6312-18 գրությունը, ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 05.04.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով և «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ի 10.04.2018թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ (այսուհետ՝ Օրենք) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***21.03.2018թ.*** հայտ է ներկայացրել «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 21.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 24.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 31 500 ՀՀ դրամի չափով:***

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 24.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 31 500 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** *պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ* ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կամ Կոմիտեի կողմից լրացուցիչ

տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազոր մարմին:

Ընդ որում այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն ***Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորությունների առկայությունը, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցեու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից 10.04.2018թ. գրությամբ ներկայացված այն դիտարկմանը, որ սույն թվականի մարտի 26-ին Ընկերությունը ՀՀ պետական բյուջե է փոխանցել 100 000 ՀՀ դրամ և արդեն իսկ բողոքարկման օրը 29.03.2018թ. դրությամբ ունեցել է 68 500 ՀՀ դրամ գերավճար, ապա սույն մասով արձանագրում եմ, որ այն չի կարող գործի լուծման համար դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող փաստ, քանի որ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 21.03.2018թ.-ին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2018թ. թիվ 03/26-3/6312-18 գրությամբ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05009413) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ